ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԲԿԼԿՆԱ

BookMark

Дмитрий Тренин

НОВЫЙ БАЛАНС СИЛ

Россия в поисках внешнеполитического равновесия

BookMark

Դմիտրի Տրենին

ՈՒԺԵՐԻ ՆՈՐ ԲԿԼԿՆՍ

Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն է
որդեգրելու Ռուսաստանը

Թարգմանությունը ռուսերենից՝
Միհրան Հակոբյանի

ԵՐԵՎԱՆ
2022

BookMark

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4
Տ 918

Տ 918 Տրենին Դմիտրի
Ուժերի նոր բալանս: Ինչպիսի՞ արտաքին քաղաքականություն է որդեգրելու Ռուսաստանը / Դ. Տրենին; Թարգմանությունը ռուսերենից՝ Մ. Հակոբյանի.- Եր.: Newmag, 2022.- 432 էջ:

Ռուսաստանը 2014-ից նկատելի ակտիվացրեց իր արտաքին քաղաքականությունը, բայց հստակ ռազմավարություն դեռ տեսանելի չէ: ԽՍՀՄ տարիներին Մոսկվան ԱՄՆ հետ մրցում էր ամբողջ աշխարհում ազդեցություն հաստատելու համար, 1991-ից մի պահ փորձում էր դառնալ Արևմուտքի մաս: Ռուսաստանին պետք է կրկին դառնալ գերտերություն, ինչպես բալանսավորել ներքին հնարավորություններն ու արտաքին ակտիվությունը, ինչպես կառուցել հարաբերություններն անմիջական հարևանների հետ, ԱՄՆ և Արևմտյան Եվրոպայի հետ հատման կետեր կան:

Ռուսաստանցի միջազգայնագետ Դմիտրի Տրենինն այս գրքում դիտարկում է հիմքերը, որոնց վրա կառուցվում են Ռուսաստանի հարաբերություններն այլ երկրների հետ: Ամփոփ ներկայացվում է Մոսկվայի արտաքին քաղաքականությունը Միխայիլ Գորբաչովի, Բորիս Ելցինի և Վլադիմիր Պուտինի կառավարման տարիներին: Վերլուծելով ոչ վաղ անցյալի հաջողությունները, ձախողումները և սխալները՝ հեղինակն առաջարկում է մտորել, թե արագ փոփոխվող աշխարհում Ռուսաստանը ինչպես պետք է ինքնուրույն ու հավասարակշռված արտաքին քաղաքականության ռազմավարություն կառուցի:

ՀՏԴ 327
ԳՄԴ 66.4

Գրքի գլխավոր հովանավոր՝
ԼՈՒՅՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ
www.luys.am

ISBN 978-9939-884-48-6
Copyright © Dmitri Trenin, 2021
Դմիտրի Տրենին «Ուժերի նոր բալանս»© 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» և «Նյումեգ» ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակուլ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես «Նյու Մեգ» ընկերության «Օրակուլ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Երախտագիտության խոսք 9
Ներածություն 11

Առաջին մաս Արտաքին քաղաքականության հիմունքները 23
21-րդ դարի միջազգային հարաբերությունների համառոտ ակնարկ 25
Ռուսաստանի արտաքին քաղաքականության գործոնները 36
Հավասարակշռության գաղափարը 86

Երկրորդ մաս Ժառանգություն 95
Գորբաչովի դասերը 97
Ելցինյան 1990-ականները 150
Պուտինի դարաշրջանը 189

Երրորդ մաս 2020-ականների Ռուսաստանի արտաքին քաղաքականության ուրվագծային քարտեզը 229
2020-ականների աշխարհը և Ռուսաստանը 231
Ռուսաստանի մեծ ռազմավարությունը 243
Անվտանգության քաղաքականություն. սպառնալիքները և Ռուսաստանի դաշնակիցները 260
Ամենամոտ հարևանները՝ Ուկրաինա և Բելառուս. Ռուսական աշխարհ 286
Եվրոպական Միություն և Արկտիկա 307
ԱՄՆ-ը և անգլախոս աշխարհը 336
Չինաստան և Արևելյան Ասիա 355
Հնդկաստան, Հարավային և Միջին Ասիա 373
Անդրկովկաս, Մերձավոր և Միջին Արևելք 388
Աֆրիկա և Լատինական Ամերիկա 405

Վերջաբան. հայացք դեպի ապագա 410
Ծանոթագրություններ 423

BookMark

Կնոջս՝ Վերային, որը հոգում է, որ չլճանամ:

BookMark

Երախտագիտության խոսք

Ռուսաստանի արտաքին քաղաքականության մասին գիրք գրելու միտքը հեղինակին հուշեց «Ալպինա Պաբլիշեր» հրատարակչության գլխավոր խմբագիր Սերգեյ Տուրկոն, ինչի համար հատուկ շնորհակալություն եմ հայտնում նրան: Այդ առաջարկը թույլ տվեց ինձ իրականացնել իմ վաղեմի մտադրությունը՝ վերլուծել երկրի արտաքին քաղաքականության երեքուկես տասնամյակի ընթացքը՝ սկսած գորբաչովյան վերակառուցումից, և, հիմք ընդունելով այդ տարիների դասերը, որոշակի մտքեր և գաղափարներ առաջարկել առաջիկա տասնամյակի արտաքին քաղաքականության համար: Շատ շնորհակալ եմ իմ ավագ ընկեր, դեսպան Անատոլի Ադամիշինին՝ հայրենական արտաքին քաղաքական շրջանակների ամենաակնավոր և հարգարժան ներկայացուցիչներից մեկին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի նախկին առաջին տեղակալին և ՌԴ ԱՊՀ գործերով նախկին նախարարին, որը կարդաց ձեռագրի առանձին գլուխներ և շատ կարևոր դիտողություններ արեց: Եվ վերջինը, բայց ոչ նվազ կարևորը. շատ ուրախ եմ, որ միշտ կարող եմ հույս դնել ընտանիքիս օգնության և աջակցության վրա, որդիներիս՝ Պյոտրի և Անդրեյի, որոնք դարձան ձեռագրի առաջին և շատ ուշադիր ընթերցողներն ու կառուցողական քննադատները, իհարկե, կնոջս՝ Վերայի, որին նվիրում եմ այս գիրքը:

BOOKLAND

Ներածություն

Ռուսաստանի նորագույն պատմության մեջ մեր դարի 20-ականները հավանաբար լինելու են կա՛մ որոշիչ, կա՛մ կանխորոշիչ՝ անմիջապես նախորդելով մեծ փոփոխություններին: Ժամանակակից ռուսաստանյան կապիտալիզմի, քաղաքական համակարգի, սոցիալական հարաբերությունների զարգացման 3 տասնամյակների ընթացքում ոչ միայն հարուստ փորձ է կուտակվել, այլև ի հայտ են եկել հսկայական թվով հակասություններ և խնդիրներ, որոնք այսպես թե այնպես պետք է լուծվեն: Ակնհայտ է, որ Ռուսաստանի Դաշնության ներկայիս քաղաքական և տնտեսական մոդելն ավելի ու ավելի է սպառում իրեն: Ավելի ու ավելի է զգացվում արժեքային դատարկությունը: 2020-ի սահմանադրական փոփոխություններն ապագայում բավարար չեն լինելու: Երկրի՝ 1980-ականներին սկսված վերափոխումը շարունակվելու է: Պետությունը, որի հիմքերը ստեղծվել են Պուտինի օրոք, տնտեսությունը, որն արմատներով հասնում է ելցինյան դարաշրջան, և արտաքին քաղաքականությունը, որի հարացույցը՝ հետագա փոփոխություններով հանդերձ, ձևավորվել է Գորբաչովի ժամանակներում, ամենայն հավանականությամբ, արմատապես կփոխվեն:

Բազմաթիվ հարցերի շարքում, որոնց պետք է պատասխաններ տրվեն, կա նաև աշխարհում Ռուսաստանի տեղի և դերի հարցը, իսկ երկրի արտաքին քաղաքականությունն իր նշանակությամբ վերջին տեղում չէ: Ռուսաստանի համար արտաքին քաղաքականությունը ոչ այնքան ներքինի արտացոլումն է, որքան կարևոր, ինքնուրույն գործոն, որ հաճախ գործուն ազդեցություն է ունենում երկրի ներքին կյանքի վրա: Այսօր էլիտաների մակարդակում գլխավոր ջրբաժանն անցնում է նրանց միջև, ովքեր իրենց մասնավոր և կորպորատիվ շահերի լավագույն իրացումը տեսնում են գլոբալ հարաբերություններում Ռուսաստանի տեղակայմամբ՝ պետության սահմանափակ և ծառայողական դերակատարմամբ (պայմանական «մասնավոր գործիչներ»), և նրանց, ովքեր անձնական նպատակներին հասնելու գործում խաղադրույք են անում պետության վրա, որպես գլխավոր գործիք (պայմանական «պետական գործիչներ»): Մինչ ոմանք անխուսափելի են համարում Արևմուտքի հետ նոր Բրեստյան

հաշտությունը, մյուսները պատրաստ են ոչ միայն շարունակել կռիվը «հիբրիդային պատերազմում», այլև հակամարտությունը շուռ տալ իրենց օգտին:

Այս հակասությունը շատ հեռու է 19-րդ դարի սլավոնասերների և արևմտականների, 20-րդ դարասկզբի լիբերալների և պահպանողականների, 20-րդ դարավերջի դեմոկրատների և բռնապետականների պայքարից: Սա արդեն գաղափարախոսությունների պայքար չէ, չնայած դրանում ծառայողական նշանակությամբ գաղափարախոսական տարրեր կան: «Մասնավոր» և «պետական» գործիչների պայքարն առաջին հերթին որոշակի շահերի բախում է, որում կողմերի գլխավոր տարբերությունը միանգամայն նյութական նպատակների իրացման եղանակն է: Երկու խմբերի անվանումները չակերտավոր են, քանի որ պայմանական մասնավոր գործիչները չեն կարող գոյատևել առանց պետական օրգանների հզոր աջակցության, իսկ պայմանական պետական գործիչները, օգտագործելով բյուրոկրատական մեքենան, ձգտում են հասնել մասնավոր նպատակների: Այլ կերպ ասած, հարցը հետևյալն է. ինչպիսի՞ն կդառնա ապագայի Ռուսաստանը՝ կորպորացիաների պետությո՞ւն, թե՞ պետություն-կորպորացիա:

Սա, ըստ էության, պայքար է կառավարող էլիտայի ներսում, որը իշխում է Ռուսաստանում և այդ պատճառով էլ տիրում է երկրին: Այսպիսի իրադրությունում հասարակությունը գործնականորեն բացակայում է: Մինչդեռ ռուսաստանյան հասարակությունը զարգանում է բավական ակտիվ, թեև ոչ համաչափ: 1990-ականները, Խորհրդային Միության փլուզումից հետո, երկիրն անցկացրեց գոյատևման, 2000-ականները՝ կայունացման և վերականգնման, 2010-ականները՝ լճացման ռեժիմում, իսկ արտաքին դաշտում՝ Արևմուտքի հետ, որն ավանդաբար Ռուսաստանի կարևորագույն հակազդողն է, սաստկացող դիմակայության պայմաններում: Երկիրն այս բեռով է մուտք գործել 2020-ականներ: Հետագայում դիմակայությունն ամենայն հավանականությամբ ուժգնանալու է: Արևմուտքը չի զիջի, Ռուսաստանն էլ կապիտուլյացիայի չի համաձայնի: Այսպիսով, Ռուսաստանի ապագայի համար արտաքին գործոնն ավելի ու ավելի կարևոր է դառնում:

Հասարակության մակարդակում արտաքին քաղաքականությանը վերաբերող հակասությունն ավելի խորն է: Այն կոլեկտիվ և անհատական շահերի միջև է: Նախկինում անհատական շահերն ամուր կապված էին կոլեկտիվ շահերին: Պատերազմների, հեղափոխությունների, ինդուստ-

րացման, կոլեկտիվացման, սառը պատերազմի դարաշրջանում առանձին մարդկանց ճակատագրերը մեծապես որոշվում էին դասակարգային ծագմամբ և աշխարհագրությամբ: Ազատությունն ու պարտադրանքը, կյանքն ու մահը զանգվածային երևույթներ էին: Երկիրը լքելու և ժողովրդի մեծ մասի ընդհանուր ճակատագրից խուսափելու հնարավորությունները շատ չէին: Զինապարտությունը համընդհանուր էր: Խորհրդային Միությունը ձևավորվել էր և գոյություն ուներ որպես հասարակություն, որն ամբողջովին փակ էր արտաքին աշխարհի համար:

Գլոբալացման պայմաններում դրությունը փոխվել է: Հայտնվել են շատ մարդիկ, և ոչ միայն հարուստ, որոնք կարող են իրենց ճակատագիրն այլևս չկապել կոնկրետ պետության հետ: «Գլոբալ ռուսները», ինչպես և «գլոբալ» հնդիկները, բրազիլացիները, ճապոնացիները, ունենալով միջոցներ, պահանջված մասնագիտություն և կրթություն, կարող են ազատորեն աշխատանք կամ եկամուտի այլ աղբյուր գտնել և բնակության վայր ընտրել աշխարհի տարբեր մասերում՝ առանձնանալով իրենց «հողային» հայրենակիցներից, որոնք տարբեր պատճառներով հայրենի հողին կպած են մնում: Խոսքը նրանց մասին չէ, ովքեր տեղափոխվել են արտասահման՝ ապրելու: Շատերը չեն հեռանում հայրենի երկրից, բայց այդուհանդերձ ապրում են բոլորովին այլ աշխարհում, քան իրենց հայրենակիցների մեծամասնությունը: «Գլոբալ» մարդկանց համար սեփական պետությունը ոչ այնքան ընդհանուր տուն է, որքան ծանր հարկեր և այլ սահմանափակումներ: Նրանք ընտրում են բիզնեսի վարման ավելի շահավետ իրավական միջավայր, ապրելու համար ավելի հանգիստ և անվտանգ վայրեր: Այս խմբերի շահերի և հասարակության մյուս հատվածի միջև լուրջ ճեղքվածք է գոյացել նաև պետության արտաքին քաղաքականության վերաբերմամբ: Առաջացել է հակասություն պետության մեջ արմատացած ազգային և առավել ազատ մարդկանց մասնավոր շահերի միջև:

Սակայն տերությունների մրցակցության ուժգնացումը, ընդհուպ մինչև հակամարտություն, նորից փոխում է իրադրությունը: Կրկին առաջին դիրք են գալիս տարբեր տրամաչափերի պետությունները՝ գերտերությունները (ԱՄՆ և Չինաստան), մեծ տերությունները (Ռուսաստան, Հնդկաստան), միջին (Թուրքիա, Իրան, Սաուդյան Արաբիա) և փոքր (Հյուսիսային Կորեա, Կատար) պետությունները՝ հետին պլան մղելով միջազգային ինստիտուտներն ու վերազգային կորպորացիաները: Պետությունները նորից կտրուկ

հայտարարում են իրենց ազգային շահերի մասին, որոնք սկսում են բախվել տարբեր մակարդակներում: Պետական սահմանները նորից իմաստ են ձեռք բերել: Իրենց աշխարհի քաղաքացի երևակայած մարդիկ ստիպված են վերստին կողմնորոշվել: Տարբեր պետություններում այս մարդկանցից սկսում են ավելի շատ համերաշխություն և համախմբվածություն պահանջել: Այսպես է արտաքին քաղաքականությունը փոխում ներքին զարգացման ուղղությունը:

Սովորական ռուսաստանցին որևէ այլ երկրի շարքային քաղաքացու պես գործնականում երբեք չի խառնվում արտաքին քաղաքականության ձևավորմանը: Միաժամանակ միլիոնավոր քաղաքացիների վրա ավելի ու ավելի շատ են ազդում արտաքին քաղաքական որոշումները, որոնք ընդունվում են Կրեմլում, մերձմոսկովյան պետական նստավայրերում (Նովո-Օգարյովո, բազմաթիվ Գորկիներ) և իրականացվում են մոսկովյան հրապարակներում (Ստարայա, Սմոլենսկայա, Արբատսկայա, Լուբյանսկայա, նաև Յասենև): Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհը (որպես երկրների ամբողջություն) ավելի փոքր դարձավ, բայց դրանից խաղաղությունը (որպես պետությունների հարաբերությունների իրադրություն) ավելի ամուր չդարձավ: Դա վերջնականապես պարզ դարձավ, երբ ավարտվեց բազմաբևեռ աշխարհի քառորդդարյա ընդհատումը, և ամերիկյան միանձնյա գերիշխանությունից հետո մեծ տերությունների մրցակցությունն ու դրա հետ կապված հակամարտությունները բռնկվեցին նոր ուժով:

* * *

Ընթերցողին առաջարկվող գրքի վերնագրում կան «բալանս» և «հավասարակշռություն» բառերը: Բալանսը վերաբերում է ուժերի գլոբալ դասավորությանը, որը ենթակա է մշտական փոփոխությունների, հետևաբար սկզբունքորեն անկայուն է: Հավասարակշռությունը, հակառակը, վերաբերում է Ռուսաստանի արտաքին քաղաքականության որոնելի վիճակին և այդ քաղաքականության կայունության երաշխիքին: Գրքի գլխավոր դրույթն այն է, որ պետության արդյունավետ արտաքին քաղաքականության համար անհրաժեշտ է հավասարակշռություն տարբեր շահերի խմբերի միջև՝ մասնավորի և հանրայինի, կենտրոնականի և տեղայինի, պետության քաղաքական նպատակների և նրա տնտեսական հնարա-

վորությունների, զարգացման շահերի և անվտանգության կարիքների, արժեքային և գաղափարախոսական տարբերությունների, արտաքին քաղաքականության աշխարհագրական և գործառնական ինչ-ինչ ուղղությունների, արտաքին գործընկերների, դաշնակիցների և հակառակորդների, երկարաժամկետ ռազմավարության, միջնաժամկետ գործողությունների ու ամենօրյա մարտավարության և այդպես շարունակ: Գրքի վերնագրում այս՝ առաջին հայացքից ակնհայտ և ծամծմված դրույթը ենթադրում է, որ հեղինակի կարծիքով այդպիսի հավասարակշռություն ռուսաստանյան արտաքին քաղաքականության մեջ մեծ հաշվով դեռևս չկա, դրան դեռ պետք է ձգտել:

Այս գիրքը Ռուսաստանի ժամանակակից արտաքին քաղաքականության մասին է, ավելի ճիշտ՝ ոչ վաղ անցյալի դասերի և հեռանկարների: Գիրքը գորբաչովյան վերակառուցման արտաքին քաղաքական ժառանգության, ելցինյան հախուռն 1990-ականների և Վլադիմիր Պուտինի շարունակվող երկարատև կառավարման մասին է: Այս տարիների միջազգային քաղաքականության գլխավոր արդյունքների և դասերի, այն հաջողությունների, որոնք պետք է անպայման պահպանել ապագայի համար: Այն անհաջողությունների, որոնք պետք է շտկել, ուղղել, փոխել՝ առաջարկելով նոր մոտեցումներ: Սխալների, սխալ հաշվարկների և ձախողումների, որոնք պետք է նախազգուշացում դառնան ապագայի համար: Վերջապես այն մասին է, թե ինչը չի անցել ժամանակի և խղճի փորձությունը, և ինչից պետք է վստահաբար հրաժարվել՝ աշխատելով ուղղել սխալները:

Ռուսաստանի միջազգային դրությունը հակասական է: Պետությունը վերականգնել է ներքին սուբյեկտայնությունը, վերադարձրել մեծ, այսինքն՝ ինքնուրույն տերության կարգավիճակը, որը հիմա պետք է պաշտպանել: Մոսկվայի ակտիվ գործողությունները դուրս են եկել հետխորհրդային տարածությունից: Մասնակցելով Սիրիայում պատերազմին՝ Ռուսաստանը վերադարձել է Մերձավոր Արևելք: Խորանում և ընդլայնվում է Չինաստանի հետ գործընկերությունը: Մրցակիցները նկատում են Ռուսաստանի ակտիվությունն աշխարհի տարբեր հատվածներում՝ Կենտրոնական Աֆրիկայից մինչև Լատինական Ամերիկա, Արկտիկայից մինչև Արևելյան Միջերկրական:

Միաժամանակ, արդեն 7 տարուց ավելի Ռուսաստանի հարավարևմտյան սահմաններին, Դոնբասում, գոյություն ունի զինված հակամար-